էր, երբեմն մատների վրայ թոեր էր հաշւում: Բայց ինձ զարմացրեց մի բան, երբ նա նամակներից մէկի վրայ քսեց մի հեղուկ, եւ իսկոյն առաջոայ տողերի մէջտեղում յայտնոեցան նոր տողեր՝ բաց-կանաչագոյն տառերով: Որտե՞ղ էին թաքնոած այդ տառերը: Ես չհամարձակոեցայ հարցնել, երբ նկատեցի, որ նա դեռ ոչ բոլորովին հանգստացած էր:

Նամակները կարդալուց յետոյ նա բոլորը այրեց: Այժմ միայն ուշադրութիւն դարձրեց իր մօտ դրած տառեխների եւ օղիի շիշի վրայ:

— Վանայ տառե՛խ... որքան ընտանիքներ ապրում են միայն այդ փոքրիկ ձկներով, — բացականչեց նա եւ սկսեց ուտել: — Դու չե՞ս սիրում, — դարձաւ դէպի ինձ:

Ես ախորժակ չունէի մի բան ուտելու: Ճանապարհի յոգնածութիւնից սաստիկ ջարդոած էի: Հանգիստ եւ երկարատեւ քունը միայն կարող էր փոքր ի շատէ կազդուրել ինձ: Բայց Ասլանի հոգը չէր. այդ երկաթի մարդը չգիտէր, թէ ի՞նչ է հանգստութիւնը: Նա անհամբերութեամբ սպասում էր վարպետին: Շատ չանցաւ, վերադարձաւ նա եւ, տարած զէնքը իր տեղը դնելով, մի քանի անգամ անցուդարձ արեց սենեակի մէջ, ինքն իրան կրկնելով.

— Անտանելի՛ է... անտանելի՛ է... մինչեւ ե՞րբ... համբերութիւններս հատաւ...

— Ինչպէ՞ս վերջացաւ ձեր արշաւանքը, — հարցրեց Ասլանը ժպտելով:

— Մինչեւ իմ հասնելը՝ ամէն ինչ վերջացած էր, քրդերը իրանց գործը կատարել էին... — պատասխանեց նա՝ լեղակի կարասների մէջ կապոյտ գոյն ստացած ձեռքերը տրորելով եւ միեւնոյն խօսքերը կրկնելով: — Համբերութիւններս հատաւ... էլ համբերութիւն չմնաց... մինչեւ ե՞րբ...

Ասլանի մեղմ ժպիտը ծիծաղի փոխոեցաւ:

— «Համբերութիւնը կեանք է», այդ խրատը աւանդեցին մեզ մեր պապերը, — ասաց նա, հեգնական կերպով նայելով վարպետի վրայ:

— Այո՛, բայց ամէն համբերութիւն իր չափն ու սահմանն ունի, — պատասխանեց նա, շարունակելով կապոյտ ձեռքերը տրորել: — Իսկ մեր համբերութիւնը անզգայ դիակների համբերութիւն է, եւ աւելի ոչինչ:

Ասլանը այժմ լուրջ դէմք ընդունեց:

— Պատմեցէք, բանը ինչումն է, — հարցրեց նա: